

Պատմություն № 24


Կասկո պայմանագրի շրջանակներում ապահովագրական հատուցման մերժում՝ ոչ ձմեռային անվադողերով երթևեկելու հիմնավորմամբ



Փետրվար ամսին երթևեկելով ճանապարհաձածակի սառցակալած հատվածով՝ Հաճախորդը կորցրել է մեքենայի կառավարումը, ինչի հետևանքով բախվել է ծառին: Քանի որ Հաճախորդն Ընկերությունում ապահովագրել է իր ավտոմեքենան, դիմել է Ընկերություն՝ ապահովագրական հատուցում տրամադրելու պահանջով, սակայն Ընկերությունը մերժել է տրամադրել հատուցում՝ պատճառաբանելով, թե Հաճախորդը երթևեկել է ոչ ձմեռային անվադողերով, ուստի, համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի, Ընկերությունը ապահովագրական հատուցում տրամադրելու պարտավորություն չի կրում:

Համաձայն չլինելով Ընկերության դիրքորոշման հետ՝ Հաճախորդը դիմել է Հաշտարարին՝ Ընկերությունից պահանջելով պատճառված վնասի հատուցում:

Հաշտարարը ոչ միայն ուսումնասիրել է կողմերի միջև կնքված ապահովագրության պայմանագիրը և կից պայմանները, այլև պահանջի քննությանը ներգրավել է անկախ փորձագետի՝ մեքենային անվադողերի տեսակը պարզելու նպատակով:

Ըստ մասնագետի՝ անվադողերի վրա առկա է «M+S » նշումը, ինչը նշանակում է MUD AND SNOW (ցեխ և ձյուն). դա նշանակում է, որ տվյալ անվադողը նախատեսված է ցեխոտ և ձյան պայմաններում վարելու համար: Մասնագետը որպես լրացում նշել է, որ տվյալ անվադողի վրա առկա են երկաթյա կոճգամներ, որոնք կոնկրետ նախատեսված են ձմռան եղանակին վարելու համար:

Հաշտարարը եզրակացրել է, որ տվյալ դեպքում Հաճախորդին պատկանող ավտոմեքենայի անվադողերը հանդիսացել են ձմեռային անվադողեր, ուստի Ընկերության կողմից ապահովագրական հատուցումը մերժելու որոշումը անհիմն է, և Հաճախորդն իրավունք ունի ստանալու ապահովագրական հատուցում: